Հայաստանի կենսաբ. հանդես, 1(62), 2010

ԳԻՏՈՒԹՅԱՆԸ ԱՆՄՆԱՑՈՐԴ ՆՎԻՐՎԱԾ ԿՅԱՆՔ

(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ.Ա. Դավթյանի ծննդյան 75 ամյակի առթիվ)

2009 թվականի հոկտեմբերի 14-ին լրացավ խոշոր կենսաքիմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Միսակ Արշամի Դավթյանի ծննդյան 75-ամյակը:

Մ.Ա. Դավթյանը ծնվել է 1934 թ. հոկտեմբերի 14-ին Սոֆիայում (Բուլղարիա), 1946 թ. հայրենադարձվել է: 1952թ. ավարտելով միջնակարգ դպրոցն, ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը, որն ավարտել է գերազանցությամբ 1958թ: 1958-1960թթ.՝ աշխատել է Թալինի շրջանում որպես տեղամասային բժիշկ, իսկ 1960-63թթ. սովորել ԽՍՀՄ ԲԳԱ կենսաբանական և բժշկական քիմիայի ինստիտուտի ասպիրանտուրայում՝ խոշոր կենսաքիմիկոսներ Ս. Կապլանսկու և Ա. Բրաունշտեյնի ղե-կավարության ներքո: 1963թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ նվիրված սրտամկանի ամինաթթվային փոխանակության հարցերին: Վերադառնալով Երևան՝ աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտում, որտեղ 1970թ-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ գլխուղեղի օրնիտինային ցիկլի ֆերմենտների գործունեության վերաբերյալ:

Մ.Դավթյանը 1971թ. անցնում է աշխատանքի ԵՊՀ-ում և գրեթե 4 տասնամյակ իր գիտամանակավարժական գործունեությունն իրականացնում է մայր բուհում: Նա 1971-2000 թթ. և 2006 թվականից մինչև օրս ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնի վարիչն է, միաժամանակ 1971թ-ից անընդմեջ համալսարանի կենսաքիմիայի պրոբլեմային (ներկայումս գիտահետազոտական) լաբորատորիայի ղեկավարն է: Մ.Դավթյանը 1978-85թթ. և 1996-99թթ. եղել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկանը, 1985-89թթ.՝ համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, իսկ 1990-91թթ.՝ առաջին պրոռեկտորը: Նա 1989-1990թթ. եղել է ՀՀ ժողովրդական կրթության նախարարը, իսկ 1999-2003թթ-ին՝ Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորը:

Մ.Դավթյանը լայն ճանաչում ունեցող կենսաքիմիկոս է: Նրա հետազոտությունները նվիրված են ազոտ պարունակող միացությունների, հատկապես ամինաթթուների

փոխանակության և համապատասխան ֆերմենտների ակտիվության կարգավորման հիմնահարցերին: Նա ապացուցել է կաթնասունների սրտամկանում ալանին դեհիդրոգենազի առկայությունը և պարզաբանել տրանսամինազների ներբջջային տեղակայումը կարդիոցիտներում, հայտանաբերել L-ամինաթթվային օքսիդազը մի շարք օրգանիզմներում և հյուսվածքներում: Առանձնապես արժեքավոր են Մ.Դավթյանի և նրա աշխատակիցների կողմից օրնիտինային ցիկլի ֆերմենտների համեմատական էվոլյուցիոն առումով կատարված հետազոտությունները: Այդ հետազոտությունները թույլ տվեցին Մ.Դավթյանին հիմնավորել բնության մեջ մեծ տարածվածություն ունեցող ոչ ուրեոթելիկ արգինազի գոյությունը, որն ի տարբերություն ուրեոթելիկ օրգանիզմների լյարդում պարունակվող և ամոնիակի չեզոքացման նպատակով օրնիտինային ցիկլում գործող ուրեոթելիկ արգինազի, չի մասնակցում ամոնիակի չեզոքացման մեխանիզմներում և ունի ուրույն մետաբոլիկ դեր: Հիմնավորվեց ոչ ուրեոթելիկ արգինազի մասնակցությունը արգինինից պրոլինի առաջացման մեխանիզմում: Զգալի է Մ.Դավթյանի ներդրումը էվոլյուցիոն և անհատական զարգացման ընթացքում ուրեոթելիզմի ձևավորման մեխանիզմներում արտաքին պայմանների նշանակության, ուրեոթելիկ արգինազի ինդուկցման և արգինինի կենսասինթեզի հայտնի 4 ֆերմենտների հետ նրա ինտեգրացման վճռորոշ դերի մասին:

Ակադեմիկոս Մ.Դավթյանը մեծ կարևորություն է տալիս երիտասարդ մասնագետների պատրաստման գործին: Նա կարդացել է մի շարք նոր դասընթացներ (,Նյութափոխանակության կարգավորումե, ,Բժշկագիտության կենսաքիմիական ասպեկտներրե և այլն), որոնք շարունակ հարստացվում են գիտական վերջին տվյալներով: Նրա դասախոսությունները ունկնդրվում են մեծ հետաքրքրությամբ ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների և գիտաշխատողների կողմից: Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել են շուրջ 70 թեկնածուական և 4 դոկտորական, այդ թվում արտասահմանյան քաղաքացիների, ատենախոսություններ: Մ.Դավթյանի սաներից շատերը ղեկավարում են տարբեր կենսաքիմիական լաբորատորիաներ հանրապետությունում կամ նրա սահմաններից դուրս: Մ.Դավթյանը հիրավի կենսաքիմիկոսների յուրահատուկ դպրոցի հիմնադիր է ու ղեկավար: ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնը և նրա կից գործող գիտահետազոտական լաբորատորիան ամբողջովին համալրված են Մ.Դավթյանի աշակերտներով: Նրա նախաձեռնությամբ և ջանքերով 1974թ. ԵՊՀ-ում բացվել է կենսաքիմիական բաժանմունք, որի շրջանավարտներին շնորհվում է ,կենսաքիմիկոսիե որակավորում (ԽՍՀՄ-ում նման բաժանմունք ունեցել են միայն Մոսկվայի և Կիևի համալսարանները):

Մ. Դավթյանի գիտահետազոտական աշխատանքների արդյունքներն ամփոփված են ավելի քան 300 գիտական հոդվածների, հեղինակային վկայականների և այլ հրատարակումների ձևով: Նա բազմիցս հանդես է եկել զեկուցումներով ու դասախոսություններով միջազգային գիտաժողովներում (Փարիզ, Օքսվորդ, Լոս-Անջելես, Լյուբլին, Մոսկվա, Բրատիսլավա, Բուդապեշտ, Սանկտ(Պետերբուրգ, Տորոնտո), 1978թ-ին Երևանում (ԵՊՀ) կազմակերպել համամիութենական գիտաժողով՝ նվիրված կյանքի ծագման և էվոլյուցիոն կենսաքիմիայի հարցերին, որին մասնակցել են գիտական տարբեր կենտրոններից ժամանած շուրջ 70 անվանի գիտնականներ: 1978թ.-ին նա ղեկավարել է ԽՍՀՄ գիտնականների պատվիրակությունը Կանադայում կայացած կենսաքիմիկոսների համաշխարհային գիտաժողովում, իսկ 1985թ. Մոսկվայում կենսաքիմիկոսների համամիութենական ընկերության կենտրոնական խորհրդի տարեկան նիստում կարդացել է նիստի ամփոփիչ զեկուցումը (նման ուշադրության արժանանում է տարեկան մեկ հեղինակ):

Մ.Դավթյանը 1977թ-ին ԵՊՀ-ում կազմակերպել է գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդ, որի անընդմեջ նախագահն է մինչ օրս: Նա մի շարք գիտական կենտրոնների խորհուրդների, գիտական հանդեսների խմբագրական կոլեգիաների անդամ է: Մ.Դավթյանի գիտական էրուդիցիան, նվիրվածությունը գիտությանը, մարդկային բարյացակամությունը բերեցին նրան բարձր հեղինակություն, սեր և հարգանք:

Խոշոր գիտնականին ցանկանք երկար տարիների արդյունավետ գիտամանկավարժական գործունեություն:

Երևանի պետական համալսարան, կենսաբանության ֆակուլտետ: